

- 28 Այն է ներածումն առ ջերմեւանդ կեան
Սուրբ Քրանչիսկոսի քաջին Սալէզեան,
Եւ ճըշմարտութիւնն յաւիտենական,
Եւ երկու քարոզք սուրբ խաչելութեան :
- 29 Ընդ որս էր եւ մեծ գիրքն Օրինակաց,
Եւ նրմանութեանց եւ կամ Կենդանեաց,
Զորոյ տպման ծախս տալ նրմա ուխտեաց
Սահակն ահագին այլ յետոյ ժըխտեաց :
- 30 Եւս ըզպատմութեան զոր շարագրեալ էր
Խորենեան քերթող Մովսէս սուրբ հայր մեր,
Վըրիպակս զըրչաց խուն ինչ սրբբազէր,
Աշխարհացուցիւն որ իսկ նորին էր :
- 31 Սըղալն ուղղէր իսկ ըստ մըտաց բանին,
Ճոխ վիպին վարուց Ոսկերերանին,
Որ ի յոյն լեզուէ ի ձայն մեր լեզուին
Շըրջեալ էր յաւուրս Վըկոյասիրին :
- 32 Նաեւ մեծ եւ փոքր գիրքն Էֆիմէրտէ
Յորս յաւել եւ եւս զայլ բանս յինքենէ,
Բարդէր խաղալեօք որ հարկաւոր է
Ի զըննին անձին որ գեռ մանուկ է :
- 33 Բովանդակ սոքին եզեն տրպագրեալ,
Պատկերօք տառիւք սիրուն յօրինեալ,
Նախաբանիւք իսկ պըճնեալ ճոխացեալ,
Զորս իւր հանճարով էր նա շարագրեալ :
- 34 Գարձեալ գըրոյկ ինչ բարեպաշտական
Կոչեալ « Կրթութիւն ապաշխարութեան »,
Ի յիտալացուց ի բարբառ հայկեայն
Թարգմանեալ տրպէր նա միանգամայն :